# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 ,
arjut.lori@mta.gov.am

N ԳԱ82
*11 մայիս 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ղեկավարի թիվ 32-33 որոշումները:

11.05.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Կատ. `*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 32-Ա**

08 մայիսի 2018թ

## 0.02504 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43 հոդվածով, ՀՀ կառավարության 29/12/2005 թվականի թիվ 2393-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29/12/2005թվականի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մել և Միլ Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից տրված հատակագիծը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արջուտ համայնքում 06-019-0035-0001 ծածկագրի տակ գտնվող հողամասը ընդգրկված է ՀՀ կառավարության 29/12/2005 թվականի թիվ 2393-Ն որոշմամբ համայնքին որպես սեփականություն փոխանցված բնակավայրերի հասարակական նշանակության հողամասերի ցանկում, ճանաչել 0.02504 հա հողամասի նկատմամբ Արջուտ համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Արջուտ համայնք , 15 փողոց 39 հողամաս:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

**Համայնքի ղեկավար՝ Վ. Մկրտչյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, գ. Արջուտ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 08 » Մայիսի 2018 թվականի N 33-Ա

### ԼՈՒՍԻՆԵ ԱՓԻՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 0.17ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ, ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Լուսինե Ափինյանի դիմումը, 19.10.2004թ հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիրը համայնքի ավագանու առաջարկությունը, համապատասխան իրավասու մարմինների եզրակացությունները, Գ. Վեքիլյան ԱՁ-ի կողմից անշարժ գույքի համար կազմված հատակագծերը: Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. Թիվ 186-Ն հրամանով, ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2393-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Լուսինե Ափինյանին մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրված հողամասի հատակագիծը կազմված է եղել մոտավոր չափերով, չի ունեցել հստակ տեղադիրք, որի արդյունքում անշարժ գույքի գրանցման տվյալներում հողամասի սահմանային չափերը նշվել են սխալ: 0.17հա մակերեսով հողամասը տրամադրման օրվանից փաստացի օգտագործվել է Լուսինե Ափինյանի կողմից համայնքի ղեկավարի 19.04.2018թ հաստատված հատակագծերով արտացոլված հողամասի սահմանային չափերով, բնության մեջ իր տեղադիրքի պատճառով այլ չափերով տրամադրել հնարավոր չէր: Իսկ հողատեսքերի անհամապատասխանություն պայմանավորված է եղել այն հանգամանքի հետ, որ հողամասը տրամադրվել է համայնքի պահուստային ֆոնդի անօգտագործելի հողամասերից, որոնք ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2393-Ն որոշմամբ ճշգրտվել են և համայնքին են փոխանցվել արդեն տարբեր նշանակության հողատեսքերով:
2. Ուստի հաստատել Լուսինե Ափինյանին տրամադրված 0.17հա ընդհանուր մակերեսով հողամասերի ճշգրտված սահմանային չափերը՝ հողատեսքերը և մակերեսները Գ. Վեքիլյան ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերի և թիվ 03052018-06-0025, թիվ 03052018-06-0026 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայականների տվյալների համաձայն:
3. 0.05907հա և 0.11093հա մակերեսներով հողամասերը չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման այդ թվում ավտոճանապարհների, դրանց ենթակառուցվածքների անվտանգության կամ սպասարկման գոտիներում, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Վ. Մկրտչյան